ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **Էլ. հասցե՝** foi@foi.am, **www.foi.am**

24.07.2023
351-28

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
Անահիտ Մանասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Մանասյան,

Սույն թվականի հուլիսի 3-ին Մարդու իրավունքների պաշտպանի ֆեսբուքյան պաշտոնական էջում հրապարակվել է տեղեկություն, որի համաձայն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվում են նույն օրը Բարձրագույն դատական խորհրդի նիստի ընթացքում լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումների առնչությամբ մամուլում տարածված հրապարակումների մշտադիտարկում և ուսումնասիրություն՝ դատական վարույթին չմիջամտելու սկզբունքի պահպանմամբ: Միաժամանակ հրապարակման մեջ նշված է, որ. «Խնդրի առնչությամբ իրականացվում է միջազգային չափանիշների ու ներպետական օրենսդրական կարգավորումների համակողմանի ուսումնասիրություն՝ լրագրողների գործունեության անխոչընդոտ իրականացման ու պետական մարմինների հաշվետվողականության ապահովման, ինչպես նաև պետական մարմինների բնականոն գործունեության երաշխավորման իրավական պահանջների հաշվառմամբ: Ուսումնասիրությունների արդյունքները կներկայացվեն դրանք ամփոփելուց հետո»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ այն մասին, թե մինչ օրս ինչ քայլեր են ձեռնարկվել վերոնշյալ ուսումնասիրությունն իրականացնելու նպատակով և երբ հնարավոր կլինի ծանոթանալ ուսումնասիրության արդյունքներին:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան